# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/44 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **16 մայիսի 2025թ.**

2025թ. ապրիլի 29-ից մայիսի 16-ը ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի ունեցավ օդորակիչի ձեռքբերման նպատակով ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/44 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Գ. Գասպարյան՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Հ. Պետրոսյանի անվան ՀԱՄ ԳԿ» մ/ճ-ի տնօրենի պաշտոնակատար,

Տ. Ջիհանգիրյան՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Հ. Պետրոսյանի անվան ՀԱՄ ԳԿ» մ/ճ-ի Մելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի բաժնի գիտաշխատող,

Վ. Ստեփանյան՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Հ. Պետրոսյանի անվան ՀԱՄ ԳԿ» մ/ճ-ի տնտեսական մասի վարիչ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Գ. Գասպարյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Թադևոսյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգը չկայացած հայտարարելու, հայտարարության տեքստը հաստատելու մասին:
2. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2025թ. մայիսի 6-ին Հանձնաժողովի քարտուղար Ա. Թադևոսյանը Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է **N 03/26-**

**1/10291-2025** գրություն, որով տեղեկացվում է, որ 30/04/2025թ. ժամը 10:45-ից ժամը 11:40-ը և ժամը 14:40-ից ժամը 15:10-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային գնումների համակարգերի անհասանելիության տեխնիկական խնդրով պայմանավորված խոչընդոտվել է նշված ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդների համակարգում անցկացվելիք աճուրդների բնականոն ընթացքը և հանձնարարվել է ՀՀ կառավարության 02/05/2019թ. N 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարել չկայացած: Տվյալ ժամանակահատվածում է տեղի ունեցել նաև **ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/44** ծածկագրով գնման ընթացակարգի հակադարձ աճուրդը:

Հաշվի առնելով վերոգրյալը 2025 թվականի մայիսի 14-ին Հանձնաժողովը որոշեց.

1.ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/44 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3. Հաստատել Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշման տեքստը

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

**2. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Գ. Գասպարյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Տ. Ջհանգիրյան ______________

Վ. Ստեփանյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Թադևոսյան ______________